ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

(Հայտերի գնահատման արդյունքների հաստատման)

ք. Երևան, Արամ Մանուկյան 31
21.11.2019թ.

Ժամը՝ 17.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թովմասյան

Անդամներ՝ Հ. Ամիրյանը

Կ. Ղազարյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գագինյան

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար՝ կենտրոնական ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը տեղի ունեցավ «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքում, ք. Երևան, Արամ Մանուկյան 31 հասցեում, 2019 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 17:00-ին:

18.11.2019թ. առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված բոլոր փաստաթղթերը:

19.11.2019թ.-ին Առաջին տեղ զբաղեցնող մասնակից «Պրոֆվենտ» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ ՊԵԿ SS աշխատակցի կողմից տրվել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ տեղեկատվություն: «Պրոֆվենտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 11500 ՀՀ դրամի հարկային մարմինների կողմից վերահսկվող ժամկետանց պարտավորություն, որը սակայն չի կերազանցում Մասնակցի

գնային առաջարկի ըստ յուրաքանչյուր թիվ 1 և թիվ 2 չափաբաժիններով առաջարկած գնի 1 տոկոսը և 50 000 ՀՀ դրամի սահմանը:

20.11.2019թ. հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված բոլոր փաստաթղթերը, գնահատման թերթիկների երկուական օրինակ և ՀՀ ՊԵԿ-ից ստացված տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 7.22, 7.24 կետերը, գնահատման թերթիկները՝ Հանձնաժողովը 3 կողմ, 0 դեմ ձայնով, ***միաձայն որոշեց***՝

Ա. Ընտրված մասնակից ճանաչել՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից «Պրոֆվենտ» ՍՊԸ-ին թիվ 1, 2 չափաբաժիններով:

Բ. Հաստատել «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-19/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Հանձնաժողովի նախագահ՝ *Վարդան Թովմասյան*

Անդամներ՝ *Համլետ Ամիրյան*

Կարինե Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Սահակ Գագինյան*